



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԱՏԱՎԱԾՔՆԵՐԸ
ԼԵՆԻՆԻ ՄՈՀԿԱԾ
ՄԱՍԻՆ,



ԳԵՂԱՐՔԱՆ 1931 ՅԵՐԵՎԱՆ

891.57
2-97

ԱՐԴԱ. ԳՐԻՆԵՐԳ. 19 NOV 2010

27 AUG 2006

ՊԱՏՄՎԱԾՆԵՐ
ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ
ՄԱՍԻՆ

891.57-3

Թարգմ. Ա.Բ. Հակիմյան

ЦЕНТР. ГОССИБИЛИОТЕКА Т.С.С.Р.

Инв. № 52 1



ՊԵՏՐՈՎ

1931

ՅԵՐԵՎԱՆ

ԱՐԴ 281 ՀՕՅ. 2013

10928

ՏԱՐԱՎԱԾ

ԺՈՂԿՈՄԽՈՐՁԸ

Լենինը ժողկոմխորհի նախագահն եր:
Նշանակված ժամին Լենինը դալիս եր
ժողկոմխորհի նիստերի դահլիճը, նըս-
տում եր բաղկաթուին և նայում ժա-
մացուցին: Յեթե կոմիսարներն ուշա-
նում ելին, նա քարկանում եր և քար-
տուղարներին ասում. «Կարգ ու կա-
նոն չկա. չեք կարողանում ժողովները
կազմակերպել»: Քարտուղարները պա-
տասխանում ելին, վոր նրանք յերեք
անգամ նախազգուշացրել են և բոլորին
ծանուցազրել ուղարկել: Լենինը քար-
կանում եր, վորովհետք նա թանգ եր
գնահատողամ ժամանակը և թույլ չեր
տալիս, վոր ուշանան:

Պետիրասի տպարան
Գրառ. № 6398 (ր.)
Հրատ. № 1624
Պատ. № 2307
Տիր. 4000



Կ 3342.63

Ժողկոմիորհի նիստերին Լենինը լը-
սում եր ժողովրդական կոմիսարների
զեկուցումները և հետո զեկուցողներին
ասում. «Մեզ մոտ բանվորները քաղ-
ցած են. գյուղից հաց չի ստացվում:
Պետք ե գյուղի համար կտորեղեն և
ստագոն պատրաստել: Գյուղացիների հա-
մար պետք ե գութաններ շինել. Գոր-
ծարանները պետք ե վառելանյութով
ապահովել: Իսկ այսոր քանի վագոն
քարածուխ ե ստացված գործարանների
համար»:

Զեկուցողը պատմասխանում եր. «Այ-
սոր ստացված ե այսքան վագոն»:

Այն ժամանակ Լենինն ասում եր.
«Քիչ ե. շատ քիչ ե: Պետք ե ավելի
լավ կազմակերպել: Յեթե գյուղացի-
ների համար քաղաքում կտորեղեն և մեխ-
ունենանք, այն ժամանակ գյուղացի-
ները հացը քաղաք կրեն»:

Այդ սովոր տարիներին եր:
Լենինն աշխատում եր մինչև ուշ գի-
շեր:

Մեկ կարմիր-բանակավին գիշերը հեր-
թապահում եր կրեմլում: Հերթապահու-
թյունից հետո նա պատմում եր. «Յես
տեսա, թե ինչպես Վլադիմիր իլլիչը
գուրս լեկավ իր առանձնասենյակից:
Նա հոգնածությունից հազիվ եր քայ-
լում. իսկ դեմքը հոգսերից դունատվել
եր»:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Լենինի ընկերները նկատեցին, վոր
նա շատ ե հոգնել: Նա յերբեք չեր գըժ-
գոհում: Յերբեմն միայն բռնում եր գը-
լուխը, տրորում քունքերը և շարունա-
կում աշխատել: Ընկերները նրան հա-
մոզեցին գնալ հանգստանալու:

Բայց հանգստի ժամանակնա եիլ գոր-

ծերի մասին եր մտածում։ Այնաև զից
նանամակներ եր գրում, դիտողությունն-
ներ եր անում, հարցեր եր տալիս։

Նա կարճահասակ, թիկնավետ և ամ-
բակազմ մարդ եր։

Բայց հանկարծ նրա ձեռքն ու վոտքը
թուլացան։

ՎԵՐՋԻՆ ՃԱՌԸ

Մոսկվայում մեծ համագումար եր։ Ու-
րիշ չերկրներից բանվորներ և գյուղա-
ցիներ ելին յեկել։ Լենինը քիչ առողջա-
ցել եր։ Նա գնաց համագումար։ Նա
հազիվ եր վոտքերի վրա կանգնում։
Քրտնքից նա անբողջովին թաց եր յե-
ղել։ Բայց և այնպես նա ուզում եր իր
խոսքն ասել ուրիշ յերկրացի ընկերնե-
րին։ Նա գերմաներեն ասաց նրանց։
«Զեղ մոտ կազմակերպեցեք բանվո-
րաց գյուղացիական իշխանություն։ Պատ-

րաստվեցեք։ Զշտապեք։ Ուժեր հավա-
քեցեք։ Մենք ձեզ կողնենք։ Հույս դը-
րեք մեղ վրա։ Մենք ուժեղ ենք»։

Նույն շաբաթ լենինը գնաց Մոսկվայի
խորհուրդը։ Այդ վերջին անգամն եր։
Նրա ձեռքն ու վոտքը դարձալ թու-
լացան։ Ել չկարողացավ գրել։ Բայց խո-
սել գեռ կարողանում եր։ Ծնկերներից
մեկը արագ գրում եր նրա խոսքերը։
Այդ ընկերը մեկ անգամ դրեց նրա
խոսքերը կոռակերատիվ առևտրի մասին,
իսկ մյուս անգամ՝ թե ինչպես պետք է
բարելավել ուսուցիչների կյանքը։ Բայց
հանկարծ բռնվեց նաև լեզուն։ Նա այլ-
ևս վոչինչ ասել չկարողացավ։ Նրան փո-
խադրեցին Մոսկվայից 30 կիլոմետր
հեռավորության վրա զանվոր Գորկի
գյուղը։

ԳՈՐԿԻ

Նա յերբեք ժամանակ չի ունեցել
յերկար հանգստանալու։ Իսկ այժմ նա
ստիպված եր ամբողջ որերով հանգըս-
տանալ։ Նրան անտառ ելին տանում
զբոսանքի։

Լենինի ընկերները Մոսկվայից հա-
ճախ գալիս ելին և վորպեսզի նրան
անհանգստություն չպատճառեն, միայն
հեռվից ելին նայում նրան։ Այդում նը-
րան ման ելին ածում անիվափոր բազ-
կաթոռով։ Զեռքը մեռած ընկած եր
ծոնկի վրա։

«Բարե»-ի փոխարեն նա ռայ, այ, այ»
եր ասում։

Յերբ նրա մոտով անցնում ելին, նա
ուրախ ժպտում եր և առողջ ձեռքով
գլխարկը գլխից վերցնում։ Հին բան-
վորներից մեկը ասում եր ընկերներին.
«Մենք պուրակի ճանապարհը հար-

թել ելինք, վոր հանգիստ ման ածենք
իլիշին։ Մենք ամեն ինչ անում ելինք,
միայն թե նա առողջանա»։


Նա առողջանալ եր ուզում։ Վոչվոք,
ինչպես նա, չգիտեր թե ինչքան շատ
գործ կա գեռ կատարելու։ Նա շա-
պում եր։ Նա սովորում եր առողջ—ձախ
ձեռքով գրել։ Նադեժդա կոնստան-
տինովսան նրան խոսել եր սովորեցնում։

Լենինը շատ եր ուրախանում, յերբ
նոր բառ եր արտասանում։ Բոլոր հա-
մագումարներում և ժողովներում բան-
փորները հարցնում ելին։ «Ի՞նչպես ե
իլիշի առողջությունը։ Արդյոք շնոր-
կառողջանա իլիշը»։

ՎԵՇ ԺԱՄ 50 ՐՈՊԵ

Բայց նա մեռավ։

Յերեկոյան, Գորկիում, ձմեռը՝ սառ-
նամանիքին, նա մեռավ։



Հունվարի 21-ին եր: Վեց ժամից անց
եր հիսուն րոպե:

Տասը բժիշկ անդամանատեցին նրա
դին:

Ամեն ինչ առողջ եր, միայն ուղեղն
եր քալքայիվել: Իսկ նա միայն հիսուն
և չորս տարի յեր ապրել:

ՇՈԳԵՇԱՐԺ № 127

Լենինի հին ընկերները յեկան՝ նրա
մարմինը Մոսկվա փոխազգբելու հա-
մար: Նա սեղանի վրա պառկած եր
կարմիր դագաղի մեջ: Դուռը բաց եր,
վոր ցուրտ լինի սենյակում: Կրծքին,
կանաչ բաճկոնի վրա ամրացած եր մեկ
շքանշան: Լենդանի ժամանակ Լենինը
շքանշաններ չեր կրում:

Զեռքերը բաճկոնի վրա ելին:

Դագաղը ցուրտ տարան: Զյան փա-
թին ընկալ նրա յերեսին: Դագաղը

ծածկեցին ապակե կափարիչով։ Ըստ
կերները նրան ձեռքերի վրա տարան։

Մինչև կայարանը յոթ կիլոմետր եր։
Չորս կողմը, բլուրների վրա, կանգնած
ելին գյուղացիներ, կանալք և յերեխա-
ներ, նրանք յեկել ելին լենինին հրա-
ժեշտ տալու։

Դադաղի վրա կային սոճու ձրուղերից
հասարակ պսակներ։ Կայարանում պատ-
րաստ կանգնած եր Ռիազան-Ռուբալյան
յերկաթզգի գնացքը՝ № 127 շողեշար-
ժով։ Շոգեշարժի մոտ կանգնած եր
մեքենավարը։ Նա 19 տարի աշխատել
եր յերկաթուղազգի վրա։ Իր աշխա-
տանքը շատ լավ գիտեր։ Բայց յերբ
պտտեց լծակը, և գնացքը շարժվեց, նա
ասավ. «Յես յերբեք այսքան չեմ հուզ-
վել»։

Գերասիմով կայարանից գնացքը
շարժվեց դեպի Մոսկվա Մոսկվայում

բանվորները նրան սպասում ելին Պա-
վելեցկի կայարանում։

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Յերեխաներից մի քանիսը կարծում
ելին, թե Լենինի գիտակը Մոսկվայի
փողոցներով կտանեն վոսկե կառքով։
Բայց այդպես չեղավ. նրան ձեռքերի
վրա տանում ելին հին ընկերները։

Նրանք լենինի գագաղը բերին Միու-
թյունների տունը և դրին «եծ զահ-
վճում։ Այդ զահիճում լենինը համա-
գումարներում և ժողովներում ճառեր
եր ասել։ Դագաղը զրված եր կարմիր
մահուղով պատաժ պատվանդանի վրա։
Նրա մոտ կար շորս արմավերի։ Պատե-
րը ծածկված ելին սև և կարմիր զրոշակ-
ներով. զրոշակների վրա ասեղնագործ-
ված ելին մանգաղներ, մուրճեր և աստ-
ղեր։ Չորս կողմը զրված ելին պսակ-

Ներ և ծաղիկներ: Վոստոքին դըված եր
սոճու փոքրիկ լըոր պատկ, վորը հյուսել
ելին մանկատան յերեխաները:

Դագաղի մոտ կանգնած եր պատվա-
վոր պահակ: Ամեն մեկը լենինի մոտ
վերջին անգամ եր կանգնում, վորպես
պահակ՝ տաս ըսպե: Լրագրերում հայ-
տարարված եր, թե ով յերբ ե կանգնե-
լու: Նվագախումը մեղմ նվագում եր
մահվան քաղերգը, և գիշեր-ցերեկ դա-
գաղի մոտով անցնում ելին մարդկանց
անվերջ շարքեր՝ վերջին անգամ նրան
մնաս բարով ասելու:

Դուրսը չտեմնված սառնամանիք եր:
Խարույկներ ելին վառվում: Դպրոցա-
կաններին հերթից դուրս ելին թող-
նում:


Զորս որ ու գիշեր անընդհատ դալիս
ելին նայելու: Վոչվոք վոչինչ չեր
առում: Վոչվոք կանգ չեր առնում: Մեղմ

նվագում եր նվագախումբը: Անցնում
ելին դագաղի մոտով: Դագաղում պառ-
կած եր լենինը, մահացած առաջնորդը:

ՅՈՒԶԱՆ—ԱՐՎՈՒՅՏԸԸ

Նազեժդա կոնստանտինովսա կրուպ-
ոկայան չորս որ կանգնած եր լենինի
դագաղի մոտ: Նա դագաղի մոտ կանգ-
նած վերջիշում եր նրա կյանքը:

Վերջին որը նրան մոտեցավ Տուլայի
նահանգից մի գյուղացի: Կրուպսկայան
ձանաչում եր նրան: Նա գործերով
յեղել եր լենինի մոտ: Գյուղացին չփոր-
ձեց նրան միսիթարել. միայն ասավ.
«Յոնչան առատ բերք տվեց: 150 գլուխ
տավարի փոխարեն ալիս 400 ունենք:
Առաջ ուղղակի մերկ ելինք, իսկ ալիմ,
տես հագնված ենք: Այս, քիչ չոքնեց
մեզ այս բանում ընկեր լենինը»: Հետո
նա լոեց և ասավ. «Իսկ չի կարելի ձեզ



Նից անցաթուղթ ստանալ՝ կարմիր հրապարակ գնալու համար։ Ուզում եմ թաղմանը ներկա լինեմ»։

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿՈՇԻԿՆԵՐԸ

Մի բանվորուհի յեկավ Միությունների տան մոտ՝ Լենինին հրաժեշտ տալու։ Տաք շալով փաթթաթված՝ նա ուրիշների հետ միասին կանգնած եր տան առաջ։ Նա հիշում եր Լենինին ու սկըսեց պատմել.

— Սովի ժամանակ մեկ անգամ տեսել եմ Լենինին։ Նա յեկել եր մեզ մոտ՝ գործարան։ Բոլորը շրջապատել եին նրան։ Միայն յես չեյի համարձակվում մոտենալ։ Նետո մերոնց ասի. «Ի՞նչպես հարցնեմ կոշիկների մասին, չե՞ վոր նա կոշկակար չի»։ «Վոչինչ», — ասում են։ — Նրան կարելի յե. նա մոտիկ մարդ ե»։

Յես իսկույն ճանապարհը ձեղքեցի, մոտեցա այ, ինչպես ձեզ մոտ եմ կանգնած, և ցույց տվի թանգագին ընկեր լենինին վոտքս, ձեռքով խփեցի կոշկիս տակին:

«Տես, ընկեր, ամերիկական ե, չի դիմանում. քանդվում ե»: Նա ուշադրությամբ նայեց ներբանին, հետո ինձ և ասավ. «Պետք ե, ընկերներ, ինքներս սովորենք լավ ներբաններ պատրաստել, թե չե մեզ ամերիկացի առետրականները միշտ ել կխաբեն: Կոռվորենք—լավ կլինի»:

Կինը ել վոչինչ չպատմեց: Լոեց, շուռ յեկավ և միայն ավելացրեց. «Ուզում եմ նրան մնաս բարով ասել»:

ԹԱՂՈՒՄԸ

Լենինին թաղեցին Կարմիր հրապարակում, կրեմլի մոտ: Դագաղի համար

դամբարան ելին պատրաստել: Նա շատ հասարակ եր. նրա վրա կար միայն հինգ տառ—սեկ բառ—լենին:

Ի՞աղման որը ժողովուրդը հավաքվեց հրապարակը: Ամեն տեղից լեկել ելին դրոշականերով: Մի բանվոր ասավ. «Մեռավ, ափսոս. չպիտի մեռներ: Ալևս չկա թանգագին մարդը»: Վորպես պատվավոր պահակ կանգնած եր և մեկ գեղջկուհի: Նա հագին տրեխներ ուներ: Նա ապրանքատար գնացքով եր լեկել թյաղանի նահանգից: Ժամացույցը խըփում ե չորսը, դադաղը վերցնում են պատվանդանից և վերջին անգամ գլխներից վեր բռնած տանում դեպի շիրիմը: Բոլորը գլխարկները վերցնում են: Թնդանոթները կրակում են, գործարանների և շողեշարժների սուլիչներն անհանգիստ շաչում են: Ամբողջ խորհրդալին յերկրներում հինգ բոպե կանգ

Ե առնում ամեն մի շարժում։ Կոնդուկտորն անցնում եր վագոնից-վագոն և ասում։ «Խնդրում եմ վոտքի կանգնել. Լենինը մեռավ»։ Քաղաքներում անցու դարձ անողները կանգ են առնում և գլխարկները վերցնում։ Նեռավոր յերկրներում ուղիովով լսվում է Մոսկավի նվազախմբի մահվան քայլերգը։ Ուրիշ յերկրների բանվորները միմյանց իրենց լեզով ասում են. «Մեռավ Լենինը»։

Դամբարանից ամենից ուշ դուրս յեկան Լենինի հին ընկերները։

Իսկուն պահակներ կանգնեցին։

Ժողովուրդը ցըլեց. Դրոշակները տարան։

Ամեն մի տնից դեպի ցած կախված եր դրոշակ։

Տների, փողոցների, դրոշակների վրա գրված եր։

«ՄԵՌԱՎ. ԼԵՆԻՆԸ. ԲԱՅՅԱԿԵՆԴՐՆԵ
ՅԵ ՆՐԱ. ԳՈՐԾԵ».




ՀՀ Ազգային գրադարան



NL0310725

ЧИСЛ 10 ЧИФ. (1/2 ч)

10.928



891·7/
4-97

АННА ГРИНБЕРГ
РАССКАЗЫ О СМЕРТИ
ЛЕНИНА

Госиздат ССРЯ Эривань — 1931